



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐ**

« 05 » 05, 2015թ.

N ԱԿ/ԿԱՏ/ՔՃԺԶ-ԼՏ

**ԱՊԱՐԱՆԻ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՕՐՀՈՒՍ ԿԵՆՏՐՈՆԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ
ՏԻԿԻՆ ՆԱՏԱԼՅԱ ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ**

Ի պատասխան Ձեր 23.04.2015թ.
գրության

2014 թվականի հունիսի 28-ին Ապարանի տարածաշրջանի Արագած համայնքում կարկտահարության հետևանքով առաջացած վնասները հաշվառելու ժամանակ համայնքի 22 գյուղացիական տնտեսությունների 6 հա կարտոֆիլի ցանքատարածությունների վրա նկատվել է կարտոֆիլի քաղցկեղ սնկային հիվանդության բռնկում: Հիվանդության բռնկման պատճառն անբավարար ցանքաշրջանառության կիրառումն է, միևնույն ժամանակ՝ պատահական աղբյուրներից տնկանյութի ձեռքբերումը: Արագածոտնի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության, սննդամթերքի անվտանգության Արագածոտնի մարզային կենտրոնի, Արագածոտնի գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոնի /այսուհետ՝ ԳԱՄԿ/ մասնագետների կողմից կատարվել են ուսումնասիրություններ, վերցրվել են փորձանմուշներ, որոնք սննդի անվտանգության տեսչության կողմից ներկայացվել են սանիտարական-լաբորատոր փորձաքննության: Արդյունքում՝ հաստատվել է հիվանդության բռնկման փաստը:

Աշնանը Արագածոտնի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության, սննդամթերքի անվտանգության պետական ծառայության Արագածոտնի մարզային կենտրոնի և ԳԱՄԿ-ի մասնագետների հսկողությամբ վարակված հողակտորներից ստացված կարտոֆիլի մնացորդները (պոլիէթիլենային պարկերով) տեղափոխվել են գյուղից 3 կմ հեռավորության վրա և թաղվել նախօրոք պատրաստված խորը խրամատներում: Բացի այդ, պարբերաբար ախտահանվել են օգտագործված գյուղգործիքները և արտահագուստը:

ԳԱՄԿ-ի մասնագետների կողմից հիվանդության տարածումը կանխելու նպատակով Արագած համայնքում, ինչպես նաև հարակից համայնքներում այս թեմայով անց են կացվել սեմինարներ, մատուցվել բազմաթիվ խորհրդատվություններ: Մեր մասնագետների կողմից պատրաստվել և հրատարակվել են այդ թեմայով տեղեկատվական թերթիկներ, ինչպես նաև հողված «Գյուղխորհրդատվություն» թերթում: Տեղեկատվական թերթիկների 250 և

«Գյուղխորհրդատվություն» թերթի 300 օրինակներ տարածվել են տնտեսավարողների շրջանում:

Հիվանդության կանխարգելման նպատակով իրականացվող աշխատանքները շարունակվում են: Մասնավորապես ս.թ. մարտի 10-ին Ծաղկաշեն և Եղիպատրուշ համայնքներում Գյուղատնտեսության աջակցության հանրապետական կենտրոնի և ԳԱՄԿ-ի կողմից Գյուղատնտեսության աջակցության հանրապետական կենտրոնի կողմից հրավիրված մասնագետների մասնակցությամբ կազմակերպվել են սեմինարներ, որոնց մասնակցել են բազմաթիվ ֆերմերներ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝



ՆԱԵՐԳՈՒ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ